

ERASMUS+ BOOST ծրագրի շրջանակներում աշխատաժողով ՀՀ Կրթության և գիտության նախարարությունում (2019թ. ապրիլի 30-ին)

2019թ. -ի ապրիլի 30-ին ERASMUS+ BOOST ծրագրի ՀՀ ԿԳ նախարարությունում կայացավ աշխատաժողով:

Աշխատաժողովին բացման խոսքով հանդես եկավ ՀՀ ԿԳ նախարար Արայիկ Հարությունյանը և ERASMUS+ ազգային գրասենյակի համակարգող Լանա Կառլովան, ովքեր կարևորեցին բարձրագույն կրթության միջազգայնացման գործընթացը Հայաստանում:

Աշխատաժողովի ընթացքում ՀՀ ԿԳ նախարարության, ծրագրի հայաստանյան և եվրոպական մասնակից բուհերի ներկայացուցիչները քննարկեցին նաև միջազգայնացման մարտահրավերները, խնդիրները և դրանց հնարավոր լուծումները: Կարևորվեց նաև միջազգայնացման ազգային ռազմավարության հաստատումն ու «Սովորել Հայաստանում» ծրագրի ստեղծումը, որոնք ևս կխթանեն միջազգայնացման գործընթացի հաջող իրականացմանը:

[Workshop agenda](#)



